№ 279 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՁՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՃՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 279

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը՝ 7 ամսվանը 6 րուբլի
Առանձին համարները ՍՄԱՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը՝

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տ ե լ ե ֆ օ ն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են հետեւեալ առաջադրեալ 20—10 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE VENISE. St LAZARE 917.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՑ **1916** Թ. ՀԱՄԱՐ

(Ձ 5-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	Այլուհետեւ ամսականը
10 րուբ.	9 րուբ.	8 րուբ.	7 րուբ.	6 րուբ.	Մէկ րուբլի

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 12 րուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամականշով։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական ըլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Адресовать: TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱԶԴ

Ի տեղեկութիւն այն անձանց, որոնք, համաձայն կոչի

Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանուհի

ՏԱՏԻԱՆԱ ՆԻԿՕԼԱՅԵՎՆԱՅԻ,

կը կամենան նուիրել ընծաներ «Քաղաքների մէջ» կովկասեան զօրքի վիրաւորականներին, յայտնվում է, որ, ինչպէս տեղեկացնում են, արդէն ընծաներ առաջող վիրաւորականները, «Քաղաքների մէջ» զրված տապօները հաղորդում է իր հոգը ծխախոտին, ուստի ցանկալի է, որ պատրաստ «Քաղաքներ» նուիրող անձինք այլեւս նրանց մէջ տապօն չը գնեն, այլ նրա փոխարէն գնեն մի այլ առարկայ։

առ. 926. 2—2 Փոխարքայի վիրահատան վերատեսուչ Բատօմին

ԲԱՑՎԱԾ Է ԿՈՎԿ. Հ. ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ԿԻՋ

„ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԻՒՐՕ“

Գաղթականներում գործ հայթայթելու համար

Կը հրաւիրենք բոլոր աշխատանքի ընդունակ գաղթականները (այր թէ կին) գալ, արձանագրուելու, որպէս զի այդ նպատակով կազմուած յանձնախումբը իր մասնակի դիտումներով աշխատի գործ հայթայթել իրենց։

Գրասենեակը բաց է առաւ. ժամը 10—3-ը և երեկ. 7—8-ը։

Բիւրօյի հասցէն՝ Երեւանի հրապարակին կից, Պուշկինսկի պասսաժ № 20. (Пушкинскій пассажъ № 20).

առ. (օ. մ.) 919. 10—2

ԹԻՖԼԻՍԻ ՓՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 17-ին

ՀԱՄԵՐԳ ԴԱՒԻԴՕՎՍԿԻԻ

ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԻ,

որ արժանացած է Բարձրագոյն պարգևի։

Սկիզբը երեկ. ժամը հինգ 8½-ին։

Տոմսակները՝ 50 կ-ից—1 ր. 25 կ.։

Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ կլուբի մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպէկ։

929. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տելէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ճեռիթն, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (stationnaire) հիւանդների (բացի վարակիչ հիւանդութիւններից) գաղօրօք զբոսնու պայմանով։

Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Ցարուխիւնեան
Ն. Ն. Վեսելօ Լգօրօվ
Լ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նօվիցկիյ
Ն. Ն. Տէր-Ներսէսեան
Ն. Բ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

հ կ.) առ 742. 100—19

ԲԱՑՎԱԾ Է

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ ժամանաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։

Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7-ը։

Бебутовская ул. № 26. 3 րդ օրիօրդաց գիմնազիայի կողքին։

առ. 779. 50 41

Կինօ-թատրօն „ՐԷԿՕՐԴ“

Ժողովրդական Տան մօտ, Վերայի կամուրջին կից, ՆՈՒԿՕՎՍԿՈՒ ՅԻՐԿ)։

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 17-ին

Հայ դրամա-օպերետային առաջին դերասանական ընկերակցութիւնը՝ ընդառաջ գնալով ժողովրդի ցանկութեանը, կը ներկայացնէ ամեն տեղ մեծ ընդունելութիւն գտած և ժողովրդին սիրելի դարձած

ԱՍԻԱԿԱՆ ՈՒԻՐԱԽ ՕՊԵՐԵՏ

ՆԱ ՉԸ ԼԻՆԻ — ՍԱ ԼԻՆԻ

(Մաշտի Իպատ)

3 գործ., հեղ. Ռաֆիլ-բէկ Հայկազօվի, թարգմ. Ս. Կարապետեանի։

Արևելեան երաժշտախումբը Թարգմանչի դեկավարութեամբ։

Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին։

Տեղերի գները մատչելի՝ 1 ր. 50 կ-ից մինչև 25 կոպէկ։

Խմբի լիազօրներ՝
Թորոսեան, Ղազարեան եւ Փիրումեան
Դիրիժօր—Ս. Կարապետեան

Տոմսակները բացի կասսայից վաճառվում են Երեւանեան-հրապարակ՝ Կոֆէ-Ճէնտրալին կից պարիկմախերի մօտ։

Թիֆլիսի կայրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի ատագ օրդինատոր

Բ Ժ Շ Կ Ո Ւ Հ Ի

ՍՕՖԻԱ ՄԻՐԶՈՅԵԱՆ

ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը Սերգիէվսկայա փող. № 1. Տելէֆօն № 16—67։

առ. 753. 50—47

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ

ԿԷՕՆՋԵԱՆ

ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Առանց հիւանդացման առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։

Ընդուն. 10—3 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։

(տ. օ.) առ. 515. 100—95

ԱԶԴ

Առեւտրական Տուն «Ն. Ի. ԲՕԶՇԱՐՋԵԱՆՑ եւ Որդիք» Ծխախոտի գործարանը սրանով յայտարարում է, որ գործարանը աշխատում է լիակատար ընթացքով եւ բոլոր տեսակի ևիրելիների արտահանումը կատարվում է անվնաս։ Մանրամասնութիւններին մեր ծխախոտային ապրանքը ատուկարարում են մեր կարծքերը։ Ծաբրիկային գլխաւոր խանութը գտնվում է Դվորցովայա փողոցի վրա, որ ընդհակառակն կարելի է ստանալ մեր գործարանի արտահանած բոլոր տեսակի ապրանքներից։

917. 3—2 տա. (Ի.)

Թիֆլիսի համալսարանի

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ներքին հիւանդութիւնների ընդհանրութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱՄՈՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՅՈՒՐՏԵՐՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈՏՕՐԱՑՈՒՄՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լաւագիտակցելը լաւատորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ԶՆՆՈՒԹԻՒՆՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏԱԿՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏԱԿՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ Бебутовская, 23. тел. 7—92։

առ. (ա. օ.) 896. 100—10

Բ Ժ Ի Շ Կ

Շուշանիկ Ղարաբեեան

(Մանկապէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

Վերադառնալով հանգստից ընդունում է հիւանդների ընդունելութիւնը։

Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2. (եր. ժ. 4—6.

Հասցէն՝ Սօլօլակ, Բարեկեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.

(ե.հ.կ.) առ. 634. 100—41

ՀԱՑ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հայ գերասանների ընկերակցութիւնը, որ այժմ իր վրա է առել հայկական ներկայացումների գործը, ընկերական հիմունքով, որոշ նպատակ ունենալով Հայ Դրամատիական Ընկերութիւնից, հեռացել է գնում։

Այդ աջողութիւնը ցոյց է տալիս, որ հայ թատրոնի գաղափարը հետզհետէ մարմնանում է հայ հասարակութեան մէջ, որ թատրոնը դառնում է պահանջ հայ հասարակութեան համար և, գլխաւորապէս, միշտ զսպակարգի համար, որ կազմում է մեծամասնութիւնը. միւս կողմից միանուագ պարբերական նպաստները, որ մի քանի հարուստներ, գլխաւորապէս Մանթաշեանները, տալիս են հայ թատրոնին, ցոյց են տալիս, որ հայ հարուստներն էլ անտարբեր չեն ազգի թատրոնը։

Հետևաբար, հայ դերասանական ընկերակցութեան ձեռնարկն արժանի է խրախուսանքի և քաջալերութեան։ Այդ ընկերակցութեան մէջ մտնում են մեր թատրոնի առաջնակարգ ոյժերը—տիկ. Սիրանոյշ, Ց. Աբելեան, Մեւուժեան, Ալիխանեան, ինչպէս և երկրորդական ոյժերից շատերը։ Ճիշդ է, ընկերակցութեան մէջ չը կան մի քանի ուրիշ առաջնակարգ ոյժեր, ինչպէս տ. Մայսուեան, Զարիֆեան, Վ. Փափազեան, և ցանկալի էր, որ նրանք էլ կարողանային մտնել ընկերակցութեան մէջ և ուժեղացնել կազմը, բայց այդ հանգամանքը արդելք չը պէտք է լինի ընկերակցութեան բարգաւաճման։ Այդ պարտականութիւնն ընկնում է Հայ Դրամատիական Ընկ. վարչութեան վրա, որ աշխատէ ընկերակցութիւնից դուրս մնացած ոյժերն էլ կազմակերպել գէթ գաւառների համար, որպէսզի մեր բոլոր դերասանները և դերասանուհիները գործ ունենան և նուիրվեն հայկական բեմի սպասաւորութեան։

Դերասանական ընկերակցութիւնն էլ պէտք է աշխատէ վառ պահել հասարակութեան համակրութիւնը դէպի թատրոնը, տալով այնպիսի պիէսներ, որոնք կրթեն հասարակութեան միտքը և զգացումները, ներշնչեն բարի և վեհ գաղափարներ՝ հայրենասիրական, մարդասիրական և բարեկրթական։

Բեպերտուարի կազմումը եղել է միշտ մեր հայկական թատրոնի թոյլ կողմերից մինը։ Մենք այն կարծիքի ենք, որ պէտք է աշխատել տալ կամ հայկական ինքնուրոյն պիէսներ՝ մեր կեանքից, ինչպէս Սունդուկեանի, Շիրվանզադէի և այլոց պիէսները, կամ եթէ տալիս ենք թարգմանական պիէսներ, պէտք է տալ եւրոպական կլասիքական պիէսների թարգմանութիւնը։

Հայ հասարակութեան վրա ևս պարտականութիւն կայ, ի սէր մայրենի բեմի, խրախուսելու դերասանական ընկերակցութեան ձեռնարկը և չանքերը, յաճախելով ներկայացումներին։

Հ. Ս.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

15 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պալօճնական Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ.—Մեր ռազմանաւերը շրջելով բոլգարական և Անատօլիայի ծովափը, ջրասուզել են 4 առագաստանաւ ապրանքով։ Նաւատէները գերի են ընկել։

ԼՕՆԴՕՆ.—Ղուտի մօտ գործող զօրքերի հրամանատար գեներալ Տաունսենդը տեղեկացնում է, որ դեկտ. 11-ին թշնամին ճեղք բացել Ղուտի հիւսիսային կողմից զօրաճակատի վրա և մտել ամրութիւնը, բայց վանվել այնտեղից, թողնելով կամ գաշտում 200 սպանված բերդի ներսում։ Կէս գիշերին սկսվեց նորից կատաղի կռիւ բերդը տիրելու համար, բայց որում թշնամուն աջողվեց գրաւել հիւսիսային պատնէշը, որտեղից սակայն նա վանվեց, թողնելով գրաւեց։ Ստանալով օգնութիւն, բերդապաշտպան զօրքը վանեց թշնամուն Ծննդեան օրվայ առաւօտեան և քշեց թշնամուն 400—900 յարդ հեռու, չը նայած որ բացված ճեղքից 100 յարդ հեռաւորութեան վրա գտնվող խրամատներից թշնամին գործում էր յրթակուժիներ։ Մենք նորից գրաւեցինք կորցրած դիրքը։ Թշնամու կորուստները են մօտաւորապէս 700 մարդ, մեր կողմից սպանվեցին և վիրաւորվեցին 190 հոգի։

Ըստ երևոյթին թիւրքերի կողմից յարձակմանը մասնակցեց մի ամբողջ դիվիզիա։

Մամուլի բիւրօն յարակցում է, որ սկզբում 200 սպանվածները չեն մըտնում հաւանօրէն 700 թիւ մէջ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

15 դեկտեմբերի

ՍՕԼՈՒՆ.—Զօրաճակատի վրա հանգիստ է։ Շարունակ գերմանացիք ռազմանիւթեր են ուղարկում վագոններով Թրակիա, Թիւրքիա և Սօֆիա։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

15 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պալօճնական Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Բիգայի շրջանում, Բարիլ լճից դէպի հարաւ գերմանացիք փորձեցին առաջանալ դէպի մեր խրամատները, բայց վանվեցին մեր կռակից։ Սակայն գերմանացիների մի մասը դիրք բռնել էր մեր խրամատների մօտ։ Մեր զօրամասերը ցրեցին այդ գերմանացիներին եւս։

Մնացած զօրաճակատի վրա մինչև Պրիպեատ սովորական հրաձգութիւն էր։

Գալիցիայում ամենուրեք ընդհարումները շարունակվում են, տեղ-տեղ ընդունելով կատաղի բնոյթ։

ԼՕՆԴՕՆ.—Լոյդի գործակալութիւնը յայտնում է. Դեկտ. 11-ի առաւօտեան Ֆրանսիական «Վիլ-դը-Սիօրա» ճանապարհորդական շոգենաւը չրասուզվել է։ 308 ճանապարհորդներ և նաւաստիներ ազատվել են, խեղդվել են 80 հոգի։

Չրասուզված են անգլիական «Իդդո» և «Կօտինհէմ» նաւերը, նաև բելգիական «Մինիատր Թէկրաէրա» շոգենաւը։ Առաջինի նաւաստիներն ամբողջովին ազատվել են, երկրորդից և երրորդից՝ միայն 7-ական հոգի։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Գետէբօրգից հաղորդում են, որ «Ցէյլօն» շոգենաւը Հիւսիսային ծովում դեկտ. 13-ին ընկել է գերմանացիների ձեռքը։

ԼՕՆԴՕՆ.—Բրիտանական գլխաւոր բանակից հաղորդում են.

Առաւօտեան թշնամին պայթեցրեց մի ական մեր դիրքերի առաջ։ Մենք ամբացանք առաջացած փոսի շուրջը։ Մեր արտիլերիան աջողութեամբ ամբակոծեց թշնամու խրամատները Մէլ-Արմանտիէր երկաթուղագծից դէպի հարաւ։ Թշնամին պատասխանեց եռանդուն կրակով և որոշ ժամանակ պատճառեց մեր դիրքերին։

Մնացած զօրաճակատում սովորական թնդանօթաձգութիւն է։

ՊԱՐԻԶ.— Պալօճնական հաղորդագրութիւն.

Վօգէզներում ուժեղ թնդանօթաձգութիւն է։

ՀՈՒՄ. —Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Դեկտ. 13-ին Ջուգիկարիա հովտում մեր արտիլերիան ամբակոծեց թշնամու դիրքերը Կօլօնիա շրջակայքում և իր աջով կրակով առաջ բերեց մեծ պայթումներ ու հրդեհ։ Մենք ունեցանք մի քանի աջող ընդհարումներ թշնամու հետ, որից բռնեցինք մի քանի գերի։ Մենք թոյլ չը տուինք թշնամուն յարձակում գործել կարասյուրտ։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊՈՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

15 դեկտեմբերի

ԹԷՀՐԱՆ.—Նոր մինիստր-պրեմիէր Ֆարման-Ֆարման կազմեց կաբինետ, որը և շաբը հաստատեց։ Սեփէհդարը ատանում է պարսիկ զօրքերի գերագոյն հրամանատարի՝ սիփէհսալարի տիտղոս, որպիսի զօրքերը մնագրութիւն կայ ամբողջովին ենթարկել Ռուսաստանի այդ կողմակալին, մինչ այսօր երկրի զինված ոյժերը ենթակայ էին զանազան վարչութիւններու։ Ապահովութեան մէջ մանում են Մօշավէր-Մեհմալիքը արտաքին գործերի մինիստր, Ալա-ուս-Սալթանէ՝ արդարադատութեան մինիստր, սարդար Մանսուր՝ պատերի և հեռագրատան, Սամսամ-ուլ-Թովլէն՝ ժողովրդական կրթութեան, պրինց Ակբեր-Միրզան՝ հասարակական աշխատանքների։ Ֆինանսների մինիստրի պաշտօնը մնում է թափուր։ Նոր կաբինետի անդամները Ռուսաստանի և Անգլիայի կողմակիցներից են։

Լուր է պատվում, թէ ռուս զօրքերը գրաւել են Կաշանը։

Պարսից կառավարութիւնը տեղեկութիւն առաւ, թէ Ղումի սերահանչակ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հոկտեմբերի 15-ին Հայկական սովետական գրողների միության վարչական բյուրոյի նիստում լսվեց Ա. Ալազանի զեկուցումը «Հայկական սովետական գրողների միության կազմակերպական հարցերի մասին»։

Զեկուցումից հետո ելույթ ունեցան Ա. Ալազանը, Ե. Չարենցը, Ա. Ահարոնյանը, Ա. Ղազարյանը, Ա. Ջիվանին, Ա. Ասլանյանը, Ա. Ղանալանյանը, Ա. Ալավերդյանը, Ա. Ղուկասյանը, Ա. Ղարիբյանը, Ա. Ղազանչյանը, Ա. Ղազարյանը, Ա. Ղազանչյանը, Ա. Ղազարյանը, Ա. Ղազանչյանը, Ա. Ղազար

Ամենայն հարգանքով հրավիրում ենք մեր ընթերցողների ուշադրությունը հետևյալ հայտարարության վրա։

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի ներկայ ծանր պայմանների պատճառով մեր թերթի տպագրությունը մեծ դժվարությունների է հանդիպում։ Թուղթը, տպագրական նյութերը, ինչպես նաև տպարանական աշխատանքները անչափ թանկացել են։ Ստիպված ենք եղել բարձրացնել թերթի գինը։ Սակայն, չնայած այդ բոլորին, մենք ամեն կերպ ձգտում ենք պահպանել թերթի նախկին ծավալը և ընդարձակ տեղ հատկացնել գրական, գիտական և հասարակական հարցերի լուսաբանության համար։

Ներկայումս թերթի գինը հետևյալն է լինելու։

Ամսական բաժանորդագրությունը 38 ռուբլի։

Կես տարվա բաժանորդագրությունը 19 ռուբլի։

Երեք ամսվա բաժանորդագրությունը 10 ռուբլի։

Մեկ ամսվա բաժանորդագրությունը 4 ռուբլի։

Առանձին համարի գինը 50 կոպեկ։

Հետևյալ տարվանից թերթի գինը կրկնապատկվելու է։

100 տարի առաջ Ամերիկայում հրատարակվել է հետևյալ գրքերի քանակը։

Աստվածաբանական գրքեր 1.000
Իրավաբանական գրքեր 1.000
Բժշկական գրքեր 200
Մանկավարժական գրքեր 200
Գրքեր ճանապարհորդությունների մասին 200
Գրքեր գյուղատնտեսության մասին 200
Գրքեր առևտրի մասին 200
Գրքեր արհեստների մասին 200
Գրքեր գեղարվեստական գրականության մասին 200
Գրքեր զանազան գիտությունների մասին 200
Գրքեր պատմության մասին 200
Գրքեր քաղաքագիտության մասին 200
Գրքեր տարբեր լեզուների մասին 200
Գրքեր մանկական ընթերցանության համար 200
Գրքեր զանազան նյութերի մասին 200

Ամերիկայի հյուսիսային նահանգներում գրքերի տպագրությունը ամենից շատ զարգացած է եղել։ Այդ նահանգներում տարեկան տպագրվում է 4.273.571.665 թ., իսկ 1916 թ. տարում՝ 16.794.999.372 թուղթ։

◆ Ինչպես յայտնի է, Բիրմինգեմում (Անգլիա) «Post»-ի խմբագրությունը ստացել է հետևյալ հեռագիրը Ս. Պետերբուրգից։ «Ռուսական Ֆինանսների նախարարությունը հրամայել է Ռուսաստանի բոլոր բանկերին՝ ոչ մի ռուբլի չտալ ոչ մի ռուսի, մինչև որ նրանք չստանան Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հրամանը»։

◆ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի հրամանով հրավիրվում են Ռուսաստանի բոլոր բանկերի տնօրենները, որպեսզի նրանք ներկայանան Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատ՝ ստանալու համար հրամանագրեր, որոնցով նրանց իրավունք է տրվում գործել։

◆ Ռուսաստանի

ուժգնութիւն։ Վատ չէր պ. Սերժը անառակ որդի Սաւրէնի դերում։

Հետեւակ վարչին ներկայացումը ներկայ տարեշրջանի գեկտեմբերի 30-ին է. Ներկայացվում է «Ծոյի կրթանումը» թարգմանական պիէսը։ Նանուա

ՄԱՄՈՒԼ

Իր ժամանակին հետաքրքրները հաղորդեցին, որ մեծ-մեծնալութեան մէջ, երկարատև հիւանդութենից յետոյ, Պետրօգրադում վախճանվեց ռուս յայտնի քննադատ-գրող Միխ. Ա. Պրոտոպոպով, որ շարունակողը եղաւ Դօբրոլիւբովի և Բելինսկիի ուղղութեան։

Այս առիթով Պետրօգրադի «Рѣчь»-ը գրում է.

Նա գրական ասպարէզ մտաւ 70-ական թուականներին, երբ աշխատակից «Отечест. Записки» ամսագրի։ Նրա անունը մեծ ժողովրդականութեան էր վայելում հրատարակչութեան մէջ 80-ական թուերին և 90-ական թ. թ. սկզբին, ըստ ուրում Պրոտոպոպովին էլ ազատ չէր մնաց ազատ և համարձակ մտածող մարդկանց վիճակից, վրա հասած բեակցիայի շրջանում, և մի քանի տարով աքսորվեց հայրենիքի Կոստրոմայի նահանգի Զուխլոմ քաղաքը։ Սակայն նա չընդհատեց իր աշխատակցութիւնը ամսագիրներին և շարունակեց գրել «Сѣверный Вѣстникъ»-ի, «Рус. Богатство»-ի «Русскія Мысль.»-ի մէջ, մանաւանդ վերջինիս։ Որպէս «համանձնների» պահապան նա փոքր ինչ տարաձայնվեց 90-ական թ. թ. սերունդների ներկայացուցիչների հետ։ Նա բանավէճի մէջ մտաւ և՛ մարքսիստների, և՛ «դեկադենտների» և «մօդերնիստների» հետ։ Նա ցաւով ընդգծեց այն տարբերութիւնը, որ գոյութիւն ունէր հին սերնդի ժամանցողութեան մէջ «Բազիչնից մինչև հօթանասուն թուականների զործիչները» և նորագոյն սերնդի տարաձայնութիւնը «ծերունիների» հետ, որոնք հասակով էին ընդամենը 15—20 տարով և, կարվելով «նորագոյն ֆորմացիայի բելլետրիստներից», Մաքսիմ Գորկիի գլխաւորութեամբ, նա այնուամենայնիւ հարկաւոր տուրքն էր տալիս և նոր ծագող տաղանդներին, բայց այնուհետև նա դադարից հետևել նորագոյն գրականութեան, և միանգամից հեռացաւ գրական գործունէութիւնից, մնալով վերջին տանամեակում, և հետզհետէ հանգաւ կատարեալ լռութեան և մենակութեան մէջ։

Նրա գրքերը, առանձնապես յօդուածների առանձին ժողովածուն՝ Բելինսկիի, Լև Տոլստոյի, Շեդրինովի, Աքսակովի, Ժեմչուժնիկովի, Գլեբ-Ուսպենսկու. Բէշէնկովի և այլոց մասին (1896 թ.), մինչև այժմ էլ ժողովրդականութիւն են վայելում, որպէս յիշատակ գրողներին մեկնաբանող գործեր։

ՖԵԼԻԵՏՕՆ

ՄԻ ՉԻՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Մի հակաճառիք երբէք հօրդ, ուսուցիչդ և տիրոջդ։
Կօնֆուցիոս

I

Նախադասում է տեսչապետ Յիսունաու. Ներկայ են «Ծառայող» ուսուցչուհի՝ Ֆրանսիայում կրթված Ճնէմատաու, Գերմանիայում կրթված՝ Եանջլիմ-Չլինը, Ամո-Չէո, Զօնգլին-զօ, Ռուսաստանում կրթված Եանխայ, Բիժի-Բիժինո, Եանցիցիցին, ոչ մի տեղ՝ բայց ամենից «կրթված» Գղին-գզայ. ներկայ են և մի քանի իսկական ծառաներ։ Ժողովը բացվում է ժամը 7-ին։

Յիսունաու.—Այսօր, պարոնե՛ր, ես ձեզ կանչել եմ իմանալու. ա) իրաւունք ունէ՞ք դուք իրրև չինացիներ մտածելու, որ կարող է չինացի ուսուցիչը խօսել և... կարծիք յայտնել մանկավարժական խնդիրների մասին, բ) իրաւունք ունի՞ չինացի ուսուցիչը պատւի մասին մտածելու և գ) գո՞ն էք դուք լինձանից։

Ճնէմատաու.—Եթէ պարոն տեսչապետի ողորմած ականջները բարեհաճեն ունկնդրելու նուաստիս խօսքին՝ կը խօսեմ ես, Ճնէմատաու։ Թէպէտ ես ձեզ, դուք էլ լինձ այն ժամանակ չէինք ճանաչում, բայց և այնպէս ձեր բարեհաճ թոյլտուութեամբ սովորելով Ֆրանսիայում՝ միայն մի համեստ և սուրբ ցանկութիւն եմ ունեցել՝ երբևէ և ուր որ է, թէկուզ ձեր տանը, ծառայել ձեզ, լինձ երջանիկ զգալ ձեր /շնանութեան ներքոյ։ Ուսանելով այդ տարօրինակ, ազատ, արձակ ու ամնճարձակ երկրում՝ ես երբէք չը զարձայ համարձակ, այլ հետևելով իմ հայրենիքի սուրբ աւանդութիւններին և սովորութիւններին՝ մի արբազան ուխտ ունէի միայն՝ վերադառնալով հայրենիք անմահներին ու համարձակներին իմ՝ նբօպայում ուսեալի ու վկայեալի օրինակով մի լաւ դաս տալ, ապացուցել որ չինացին միշտ էլ չինացի պէտք է մնայ, որ նրա համար դարերից ի վեր և յաւիտեան յաւերժից միակ առաքինութիւնները են՝ հլու հնազանդութիւն եւ անպայման յարգանք մեծերին։ Ճիշդ է, ես մի թուլութիւն եմ ձեռք բերել այդ ձևամոլ ժողովրդից. այն էլ ի հարկէ, իրրև զտարիւն չինացի, ոչ կատարեալ կերպով. այդ ճարտասանութիւնն է. այդ էլ միայն «ձեռի» համար, ինչպէս այնտեղ են ասում՝ pro forma, զեղծիկ խօսքի, քաղաքավարութեան, ճարտասանական գեղարուեստի համար է, որ երբեմն տաքանում եմ ու մեծ-մեծ խօսքեր ասում. բայց, ի հարկէ, տէր եմ, այդ էլ ձեր վսեմաշուք և գեպի ինձ կախ ականջներին քաղցրալուր մնունդ տալու համար։ Յետոյ եմ, տէ՛ր տեսչապետը իր ծառային լաւ հասկացաւ և չէ զայրանայ, որ յանդգնեց նրա առաջ այսքան երկար խօսել։ Հակառակ դէպքում՝ պատրաստ եմ վաղը ուսուցչատեղում 3 անգամ ժպտալ ձեր երեսին և 13 անգամ չինաֆրանսիական բէվերանս անել։ Իսկ այսօրվանից բոլոր մանկավարժական հարցերում ես à tout prix, ինչ գնով էլ լինի ձեռնպահ եմ լինելու։

Եանջլիմ-Չլին.—Ձեր երկրորդ խոնարհ ծառան, պ. Յիսունաու, ա՛խ, ներողութիւն, տէր տեսչապետ, խոհեմութեան և հնազանդութեան դաս առնելով մեր երկրի մանուշակների և տարմներից և ապա Բեմարկի շուշմանկներից՝ գերազանցել է բոլորին իր հնազանդութեամբ. ես, ներողութիւն, նա, ձեր ժպտասուն ծառան մի հատիկ եւրօպացական առաքինութիւն է սովորել, որ էապէս չինական է, երբեք ես-ով չը խօսել. նա միշտ ես-ես ասելը, ես-ով խօսել սկսելը նկատել է իբրև մի անսերելի անկրթութիւն և մայր բոլոր ասուկական չարեաց։ Եւ նա միայն մի մեծ մանկավարժական սկզբունք է իւրացրել. յանուն չին ժողովրդի և ձեզ նման տէր ու տնօրէնների շոյանքով, քաղցր խօսքով ոչնչացնել բոլոր չինական մանուկների ես-երը, բոլորին հասցէատէր, դիմազուրկ անել իսկ այդ բանի մէջ առաջին օրինակը ձեր նուաստ ծառան է տալիս, մի անգամ ընդ միշտ հրաժարվելով ձեր արեամբ պայքարած առաջ ես-ով խօսելուց և կըրթական խնդիրներում սեփական կարծիք ունենալուց։

Ամո-Չէո.—Աւրձակեցէք, տէր տեսչապետ, իմ լեզուի կապանքները։ Ողորմութեամբն երկնքի թագաւորութեան, տէր և իշխան մեր «խոնարհութեան վարժարանի», ինքդ Յիսունաու, բարեհաճ արհամարհանքով լսի՛ր սորը։ Միշտ վարժ մտաւոլակութեան և մանկավարիկութեան արհեստի մէջ՝ աշխատել եմ ձեր հնորին յանձնված սանների և ուսուցիչների մէջ սերտալաշ վազումներ ու գնացքարշ խնկարկութիւններ ներշնչել։ Երբեմն և սկզբունքային թշնամի եմ ամեն մի սեփական կարծիքի և վճռականօրէն «այո» կամ «ոչ» ասելուն։ «Այո» և «ոչ» ասել միայն ժամանակ՝ իմ ողորմած հօր սրբազան խրատն է եղել. ես միշտ լինձ վատ եմ զգացել, երբ իմ կարծիքն են հարցրել, և այնպէս եմ խօսել, որ այնպէս հասկանան, ինչպէս հաճելի կը լինի մեծերիս. իմ այո՛ն հաւասար է ոչի, ոչ-ը այո՛ին։ Ես այն էլ չեմ կարողացել հասկանալ, թէ ինչ է նշանակում սեփական կարծիք ունենալ. մեր խեղճ ժողովրդի բոլոր դժբաղդութիւնների գլխաւոր պատճառը «սեփական կարծիք» կոչված հրէշն է։ Ամենից առաջ չին ուսուցիչը պէտք է հրաժարվի այդ վտանգաւոր բանից և այդ խնդրում ես քարի օրինակ տայ իրրև ուսուցիչ, կըրթող։ Իմ «համեստափայլ» պաշտօնակիցները մոռանում են չինական միակ իմաստութիւնը՝ մենք օտարներից ոչինչ չունենք սովորելու։ Կարծեմ պ. Եանջլիմ-Չլինը ասաց, թէ Եւրոպայում ուսուցիչները մանկավարժական խնդիրներում իրանց սեփ... կարծիքն են ունենում...

Եանջլիմ-Չլին.—(Ընդհատելով)։ Ո՛չ, ո՛չ. քա՛ւ լիցի, ես այդպիսի յեղափոխական միտք չեմ յայտնել...

Ամո-Չէո. Լա՛ւ, լա՛ւ, ես ուզում էի ասել որ կարծեմ «այնտեղ» կանայք էլ են խօսում, կարծիք ունենում (դառնալով Գղին-գզային). ինչպիսի կարծիք՝ սեփ... սեփակ...

Գղին-գզայ.—Նուաստս այդպիսի բանների մասին չէ էլ լսել. փառք «երկնքի որդուն». ես «եւրօպական» չեմ։ Ես խոսել եմ, խոսել այդպիսի բանների համար և իրրև «իսկական չինացի» հնապաշտ, սիրապաշտ և նորաստաց. ի սէր երկնաթագ բոդդիանի... էլ մի՛ դիմեք լինձ այդպիսի բաների համար. ես սէր ու ակօրէն տեսչապետի կարծիքին եմ բոլոր հարցերում... մի՛ մոռացէք, որ ես դեռ բաւարար ցեղով չունեմ։ Իմ սէր տեսչապետ, այդ խօսքը լինձ չէր ուղղված. իմ կարծիքը ձեր սիրագութ հրամաններն են. տեսէք ինչպես հրաւնհազանդ այսպիսի... ժողովներում անգամ դպրոցական աշխատանքներ եմ կատարում։

Ամո-Չէո.—Հէնց ես էլ այդ էի ասում. անթիւ անգամ չնորհակալութիւն, պարոն Գղին-գզայ, որ իմ միտքը այդքան պարզ և գեղեցիկ արտայայտեցիք. ես էլ հէնց այդ էի ուզում ասել, որ չինական դպրոցում անհատական, սեփական և տարբեր կարծիք չը պէտք է լինի։

Մանդարին Եանցիսիցին.—Մենք՝ կրօնի վարժապետներս ամենից հաստատ միայն այն բանի մէջ ենք համոզված, որ սիրով առաջ ստորադրեալը այլ կարծիք ունենալ չէ կարող. մենք լաւատեղեակ ենք կրօնների և գիտենք, որ մի այլ տարածված կրօնի վարդապետ-վարժապետն ես պատուիրում է. «Ծառա՛յք, հնազանդ լերուք տէրանց ձերոց մարմնաւորաց»։

Բիժի-Բիժինո.—Իմ տեսչապետ ընկերակիցների ամենաբազձալի մտքը յայտնած կը լինեմ, եթէ բոլորիս կողմից մի խօսքով ասեմ, որ մանկավարժական, ա՛խ, ներողութիւն, ուսուցիչներիս ժողովը իր իրաւունքից վեր է համարում մանկավարժական հարցերում այլ կարծիք ունենալ՝ քան մեր տէր տեսչապետի կարծիքը, հնարաւոր Յիսունաու։

Յիսունաու.—Այդ հարցը ես մի անգամ ընդ միշտ փակված ու դրականօրէն վճռված եմ համարում և անցնում երկրորդ հարցին, թէ իրաւունք ունի՞ չին ուսուցչուհը ընծայութիւն և պատիւ ունենալու։

Գրեց՝ քարտուղար ժողովի
Շիեն-չանաու

Ձինարբենից թարգմանեց՝
Կառ-տաու

ՄԱՄՈՒԼԻՆ ՅԱՅՏՆՈՒՄ Է

«Մշակ» խմբագրութեան հասցէով ստացված են նամակներ զանազան տեղերից՝ հասցնելու հետևեալ անձանց, որոնց և խնդրվում է կարգագրել տանել այդ նամակները.

1) Մշակ Յլտաթ Աբօյեան, 2) կամաւոր Սոզոմոն Պապ. Յովհաննիսեան, 3) Վարդան Լասիկեանց, 4) Մկրտիչ Մարտիկեան, 5) Ռափայէլ Մելիք-Ադամեան, 6) Սարգիս Գրիգորեան, 7) Տիգրան Սողիկեան, 9) Եղիազար Կապուզեան, 10) Արամ Մուշեղեան, 11) Արտաշէս Մարգարեան, 12) ամերիկահայ կամաւոր Գէորգ Մինասեան, 13) Նշան Տիրացեան, 14) Հմայակ Սարգսեան, 15) Մինասէլ Ափարեան, 16) Վանից գաղթած տ. Աբրահամի Ագաձան Կոկոսեան, 17) Բենիամին Բարսեղեան, 18) Մուշի Սուլիգեան գիւղացի Կարապետ Աւագեան, 19) Լադիկանց (ստացված է հեռագիր)։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՐՈՒԲԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Գօրնոյսկի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«806»-ի և «914»-ի ներսրկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ
ՈՒՌՈՒՑՔՆԵՐԸ
Բ. Ե. ՆԻԻԱՍԱՐԴՅԱՆ—11—12½ժ. վիրաբուժութեան և վիներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ—9½—2 ժ. ներքին, ղեկչի և երեխայոց հիւանդութ. և ծնախտաս.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.։
Ե. Գ. ԿԱՐԱԳԵՈՍՅԱՆ—12—1 ժ. երեքչ., հինդչ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծնկախտաս.։
ԻՐԵՆԴՈՆՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Դասւորները ձրի։ Համախորդի (կօնսիլիումի և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—221

ՅԱՅՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐ

ԲԺՇԿ. ՖԵԼՊԵՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որդմամբ՝ սրսկում եր, մասամբ ձեռքով և էլեկտրականութեամբ հիմնատար բժշկութիւն սաբ եւ սիֆիլիտական տիպերի, փափուկ ու կարծր շանկրի, սեռական թուլութեան եւ անկարողութեան բժշկութիւն նորագոյն դեղերով. բժշկան-առողջապահական խորհուրդներ եւևաւ օտար քաղաքացի հիւանդներին առանձ-րապէս եմ մասնագէտ հիւանդների մօտ և ըստ ցանկութեան՝ ինձ մօտ կամ հիվանդի մօտ եմ կանչվում (բժշկ խորհրդակցութիւն)։ Օտարերկրացիներին ուղարկում եմ խորհուրդներ և բժշկարաններ 3 լուրի վճարով։ Գաղթականներին ու չքաւորների խորհուրդը ձրի՝ ինձ մօտ։ Ընդունութիւնը ամեն օր 3—4 ժամը։ Հասցէ՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру
А. ГЕСАЯНЦУ.

Ինձ մօտ ծանօթում են իմ կազմած 1) «Վենեռական ախտերի բժշկարան» բոլմաթիւ խորհուրդներով ու բժշկարանով, գ. 1 րուբ. 2) «Փոքր-ասիական բժշկարան», անդրա ևչ ամեն մի դատաներ, գ. 50 կ., 3) «Ծիծաղի տկնոց» անեկդոտներ գ. 20 կ., 4) «Գինեկրատի տարվարը», ծիծաղաշարժ ֆոլկլոր, գ. 20 կ., 5) «Ռաճճի», գ. 10 կ. և ճաշապարի ծախս 20 կ. պէկ։

(Տ. կ.) 311. 100—64

ԱՒԵՏԻՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՄԱԲԵԱՆ ՆԵՐՔՈՒՈ ԳՏՆՎՈՂ.

ՀԱՅԱՍՊԱՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ն. Ո. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

(Գոյութիւն ունի 1895 թուից)
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
Դասընթացը 4-ամեայ՝ ամենօրեայ պարապմունքներով։
Ընդունելութիւնը դեկտեմբերի 15-ից։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից 1916 թ.։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի գիւանատունը՝ Թիֆլիս, Նիկոլայեվսկայա փողոց, № 22, տելեֆոն № 7—44.
(Հ.Հ.Վ.) 909. 0—4

ОТКРЫВАЕТСЯ ПОДПИСКА НА 1916 Г.
На журналъ
„ВѢСТНИКЪ ЕВРОПЫ"
(51-ый годъ изданія)
Основанный М. М. СТАСЮЛЕВИЧЕМЪ, издаваемый (съ 1909 г.) М. М. Ковалевскимъ подъ редакціей К. К. Арсеньева, Д. Н. Овсянико-Куликовскаго и А. С. Посникова,
ПРИ БЛИЖАЙШЕМЪ УЧАСТІИ: И. В. Жилкина, М. М. Ковалевскаго, Н. А. Котляревскаго, В. Д. Кузьмина-Караваева, А. А. Мануилова, М. А. Славинскаго, Л. З. Слонимскаго и К. А. Тимирязева.

Подписная цѣна:	На годъ:	На ½ г.:	На ¼ г.:
Безъ доставки въ ПЕТРОГРАДѢ и МОСКВѢ.	15 р. 50 к.	7р. 75 к.	3 р. 90 к.
Съ доставкой въ ПЕТРОГРАДѢ и МОСКВѢ.	16 » — »	8 р. — »	4 р. — »
Съ пересылкой въ другія мѣста Россіи . .	17 » — »	8 р. 50 к.	4 р. 25 к.
За границу, въ госуд. почт. союза.	19 » — »	9 » 50 »	4 » 75 к.

Отдѣльная книга журнала съ доставкой и пересылкой 1 р. 50 к.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ:

Въ Петроградѣ:
Въ Главной Конторѣ журнала, Моховая 37; въ книжныхъ магазинахъ: «Новаго Времени», Невскій, 40; Березовскаго, Колокольная, 14; т-ва М. О. Вольфъ, Невскій 13 и въ Гост. Дворѣ.

Въ Москвѣ:
Въ Отдѣленіи Конторы журнала Тверской бульваръ, 15; въ книж. маг. Н. П. Карбасникова, на Моховой, и въ Конторѣ Н. Печковскаго въ Петровскихъ линіяхъ.

Въ Кіевѣ:
Въ книжномъ магазинѣ Н. Я. Оглоблина, Крещатикъ, 29.

Въ Одессѣ:
Въ книжн. маг. «Образованіе», Ришельевская 12; въ книж. маг. „Одесскихъ Новостей", Дерибасовская, 20; въ книжн. маг. „Трудъ", Дерибасовская, 25.

(Տ.) 904. 4—2



Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.